Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 22 -ի N 927 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են պաշտպանության նպատակով ներգրավվող տրանսպորտային միջոցների հաշվառման, տրանսպորտային միջոցների առկայության և տեխնիկական զննության վերաբերյալ տվյալների տրամադրման հետ կապված հարաբերությունները։

2. Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում իրականացնող ոստիկանության բնագավառում պետական լիազոր մարմնի իրավասու ծառայության տարածքային ստորաբաժանումները (այսուհետ՝ ոստիկանության մարմիններ) պաշտպանության նպատակով ներգրավվող տրանսպորտային միջոցների հաշվառման տվյալները՝ տրանսպորտային միջոցի տեսակը, մակնիշը, թողարկման տարեթիվը, պետհամարանիշը, պատկանելությունը (ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմնի մասին տեղեկությունները), ինչպես նաև հաշվառման տվյալների փոփոխությամբ վերասարքավորված տրանսպորտային միջոցի տվյալները փոխանցում են համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ։

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված հաշվառման տվյալների փոփոխությունների (այդ թվում՝ վերահաշվառման, հաշվառումից հանելու կամ հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման թույլտվության) վերաբերյալ տվյալները

ոստիկանության մարմիններն ամիսը մեկ փոխանցում են համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ։

4. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն իրականացնող կազմակերպությունները զննություն անցած տրանսպորտային միջոցների և դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ տվյալները յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, փոխանցում են համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատներ։

5. Տարածքային զինվորական կոմիսարիատներում սույն կարգի 2-4-րդ կետերում նշված տվյալների հիման վրա կազմվում է տրանսպորտային միջոցի հաշվառման քարտ, որի ձևը սահմանվում է պաշտպանության բնագավառում պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով։

6. Համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատները ոստիկանության մարմինների հետ համատեղ՝ յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ, իսկ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննություն իրականացնող կազմակերպությունների հետ՝ տարեկան մեկ անգամ, համադրում են հաշվառված և տեխնիկական զննություն անցած տրանսպորտային միջոցների վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատներում առկա տվյալների հետ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ